«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Երիցյան

Ուսումնական հաստատություն՝ Արտաշատի հ.*1* հիմն. դպրոց

Երևան **2023**

Բովանդակություն

1. **Ներածություն**----------3

2.**Գլուխ1**. Հիսուսի առակների դաստիարակչական նշանակությունը հիմնական դպրոցի սովորողի համար----------4

3. **Գլուխ 2.** << Սերմնացանի առակը >> առակի միջոցով դաստիարակել ներում----------6

4.**Գլուխ 3**. <<Մոլորյալ որդու վերադարձը>> առակի շնորհիվ դաստիարակել զղջում----------9

5.**Քարտագրում**----------13

6.**Եզրակացություն**----------14

7.**Օգտագործված գրականություն**----------15

Ներածություն

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում: Պատահական չէ, որ դրանք արժանացել են Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի և այլ նշանավոր մտավորականների բարձր գնահատականին: Այսպես, Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Առակն առայսօր ունի բարոյախրատական և դաստիարակչական նշանակություն: Ձևավորվելով մարդկության վաղ շրջանում՝ առակն անցել է երկար ճանապարհ և չի կորցրել իր խրատական բնույթը: Իսկ Աստվածաշնչյան առակները՝ ի մասնավորի Հիսուսի առակները, տարբերվում են իրենց մարդասիրական ու բարձր բարոյական արժեքներով, որոնք իրենց արդիականությամբ այսօր էլ երեխային դաստիարակում են ներողամտություն, ողջամտություն, վարակում մարդկային արժեքներից ամենամեծով՝ մարդասիրությամբ: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել առակների դաստիարակաչական բնույթը հիմնական դպրոցի սովորողի վրա, ուսումնասիրել Հիսուսի առակների դաստիարակչական նշանակությունը հիմնական դպրոցում ,աշակերտին կարողանալ ընթերցել տալ աստվածաշնչյան առակները, <<Սերմնացանի առակը>> առակի միջոցով դաստիարակել ներողամտություն, <<Մոլորյալ որդու վերադարձը>> առակի շնորհիվ սովորեցնել զղջում և ապաշխարություն:

Աշխատանքում ընդգրկված են մի քանի նորարարական փորձեր պատմություն առարկայի դասավանդման մեթոդիկայում:

Գլուխ1.

Հիսուսի առակների դաստիարակչական նշանակությունը հիմնական դպրոցի սովորողի համար

Հինգերորդ դասարանի աշակերտները մասնակի գաղափար ունեն աստվածաշնչյան առակի մասին: Առակ բառի նախնական իմաստն է օրինակ: Հր. Աճառյանն իր հայերենի արմատական քառահատոր բառարանում ընդարձակ տալիս է բառի մեկնությունը: <<Ուրիշներին իբր օրինակ դրուած առարկան սովորաբար բացասական տիպ է լինում. գողը, ավազակը, անառակը ման էին ածում ժողովրդի մեջ,որպէս զի նրանից օրինակ առնելով՝ չարից հեռանայ և բարիին հետևի. բայց սրանով որպես օրինակ դրուած առարկան լինում էր <<ծանակ, նշավակ, խայտառակ>>: Առաջ ասում էին՝ Առակ օրինակի խայտառակութեան: Բայց յետոյ կարելի եղան պարզապես ասել՝ Առ առակե շրջեցուցանէին,օրինակը փոխանակ թանձրացեալ մի առարկայ լինելու՝ կարող է նրա պատկերը լինել, այսինքն փոքր պատմութիւն՝ ուր կայ մի բարեխրատ օրինակ>>: (1)

Առակը բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն է, որտեղ այլաբանության միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները:

Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին գրվել չափածո:

Առակի վարպետներ են Եզոպոսը, Ֆեդրոսը, Ժան դը Լաֆոնտենը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը:

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը

մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում «առակ» բառը մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Հիսուս Քրիստոսն իր միտքն առավել հասկանալի դարձնելու նպատակով հաճախ խոսում էր առակներով: Դրանք տարբերվում են այն առակներից, որտեղ հեքիաթային տարրեր կան, խոսող թռչուններ ու գազաններ: Հիսուսի առակները իրական կյանքից վերցված պատմություններ են :Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Հիսուս ինքն է բացատրում, թե ինչու է խոսում առակներով.

10 Ապա աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին. - Ինչո՞ւ ես առակներով
խոսում նրանց հետ: 11 Հիսուսը պատասխանեց նրանց. - Դո՛ւք պետք է գիտենաք
Աստծու արքայության գաղտնիքները, բայց ո՛չ նրանք. 12 որովհետև ով ունի, նրան
պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն
էլ: 13 Դրա համար է, որ ես առակներով եմ խոսում նրանց հետ, որովհետև նայում
են, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու չեն հասկանում: 14

Այսպես է իրականանում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է. «Անդադար կլսեն, բայց չեն հասկանա, շարունակ կնայեն, բայց չեն տեսնի, 15 որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է. նրանք խցել են իրենց ականջները և փակել են իրենց աչքերը, որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն, և ականջները լսեն, մտքերը հասկանան ու դարձի գան, և ես բժշկեմ նրանց»: 16 Բայց երանի՛ ձեր աչքերին, որովհետև տեսնում են, և երանի՛ ձեր ականջներին, որովհետև լսում են: 17 Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և արդարներ փափագեցին տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան, և ցանկացան լսել ձեր լսածները, բայց չլսեցին: [2]

(Մր 4.10-12, Ղկ *8.9-10*

Գլուխ 2.

<< Սերմնացանի առակը >> առակի ուսուցմամբ սովորեցնել ներում.

Մեր ուսումնասիրության առարկան կդարձնենք աստվածաշնչյան մի քանի առակներիը և փորձենք այն դիտարկել մեր օրերում: Ինչպես գիտենք, Հիսուսի պատմած առաջին առակը <Սերմնացանի առակը> է.

Գալիլիայի ծովի ափին Հիսուսի շուրջը հավաքվեց մարդկանց բազմությունը: Նա նավակ մտավ, մի փոքր ափից հեռացավ և մարդկանց հետ առակներով խոսեց. «Ահա մի սերմնացան ելավ սերմանելու, և երբ նա սերմանում էր, մի մաս սերմ ընկավ ճանապարհի եզերքին, և երկնքի թռչունը եկավ և այն կերավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, ուր շատ հող չկար, և իսկույն բուսավ, քանի որ հողը խորություն չուներ. երբ արևը ծագեց, խանձվեց, և քանի որ արմատներ չկային, չորացավ: Եվ ուրիշ մի մաս ընկավ փշերի մեջ, ու փշերը բարձրացան և այն խեղդեցին: Եվ մեկ ուրիշ մաս ընկավ պարարտ հողի վրա և պտուղ տվեց. կար որ

մեկին՝ հարյուր, և կար ու մեկին՝ վաթսուն, և կար ու մեկին՝ երեսուն» (Մատթ. 13: 4-8): 9 Հետո աշակերտներին ասաց. «Իսկ առակն այս է նշանակում, սերմն Աստծու խոսքն է: Որոնք ճանապարհի եզերքին են, այդ նրանք են, որ լսում են, և ապա սատանան գալիս հանում է խոսքը նրանց սրտից, որպեսզի չհավատան և չփրկվեն: Եվ որոնք ապառաժի վրա են, այդ նրանք են, որ, երբ լսեն, խնդությամբ են ընդունում խոսքը, բայց արմատ չեն բռնում, սրանք միառժամանակ հավատում են, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում: Իսկ այն, որ փշերի մեջ ընկավ, այդ նրանք են, որ երբ լսում են խոսքը, աշխարհի հոգսերով, հարստությամբ և զվարճությամբ զբաղված լինելով՝ խեղդվում ու անպտուղ են լինում: Իսկ այն, որ պարարտ հողի վրա է, նրանք են, որ բարի և զվարթագին սրտով լսելով խոսքը՝ ընդունում են այն և հարատևելով պտուղ են տալիս» (Ղուկ. 8: 11-15): /3/ Հիսուս ինքն է բացատրում Սերմնացանի առակի միտքը, ինչպես մյուս բոլոր առակների դեպքում: Այսպես առակի միտքն ավելի հասկանալի է լինում, վերլուծությունն՝ ավել ստույգ:

Առակը չափազանց ուսանելի է այսօրվա երեխայի համար,մեր օրերում երեխան հաճախ է բախվում հասարակության այնպիսի անդամների հետ,որոնց համար անձնական շահն ու հաճույքներն են կարևոր և նա հաճախ է հանդիպում դեպքերի,երբ մարդիկ նեղության պահին մոռանալով Աստծո խոսքը,նրա քարոզած բարոյական արժեքները անտեսում են մյուսներին և նրանց արարքները բերում են վատ և վտանգավոր հետևանքների:Ուստի երեխան հասկանում է,որ հասարակությունը կարիք ունի այնպիսի մարդկանց,ովքեր իրենց արարքներով բարի գործեր և բարի պտուղներ են սերմանում և երեխան գիտակցում է,որ իրենցից յուրաքանչյուրը այդ հասարակության համար կարող է դառնալ հենց այդ մարդը

Քայլ 1. Նախ դասարանին ուղղվում է հարց.
Ի՞նչ է դժվարությունը:

Քայլ 2. հանձնարարվում է գրել կարճ շարադրանք՝ << Երբ բախվեմ դժվարության...>> վերնագրով, և ապա մի քանի երեխա բարձրաձայն ընթերցում է իր գրառումը:

Քայլ 3. Երեխաներն իրար շարունակելով ընթերցում են դասագրքի նյութը: (2)

Ուսուցիչը բացատրում է, որ Աստվածաշունչը լեցուն է ներողամտության վերաբերյալ աստվածային այս պատգամով: Սակայն գրեթե միշտ էլ այն ուղեկցվում է զգուշացումով, որ առանց եղբորը ներելու անհնար է ներում գտնել: Անշուշտ, ներողամտությունը, գթասրտությունը այս առակի ուսուցման գլխավոր գծերն են՝ այն համոզմամբ, որ ես ինքս մեղավոր եմ: Ներել կարողանալու համար հոգեմտավոր լուրջ հիմք է անհրաժեշտ. եթե մեկը մտածեց, որ ինքը մեղք չի գործել, որ ինքը չի կարող սխալվել, նման մարդը երբեւէ չի կարող անկեղծորեն ներել դիմացինին: Սա մարդկային հոգեբանության մի կարեւոր հատկանիշ է. իր մասին անսխալական կարծիք ունեցող մարդը, երբ տեսնում է ուրիշի սխալը, միանգամից սկսում է հանդես գալ դատավորի դերում: Իսկ ներումն սկսվում է սեփական մեղքը գիտակցելուց: Չէ՞ որ իրականության մեջ ոչ մի արդար մարդ չկա՝ ավետարանական չափանիշներով: Ուրեմն նաեւ չներելու իրավունք չպիտի ունենա որեւէ մեկը: Այս միտքն առանցքն է առակի:

Այժմ ուսումնասիրենք <<Արդար հատուցում>> առակը:Այս առակում մենք գործ ունենք երեք հիմնական գործող անձանց հետ: Առաջինը թագավորն է, որ կամեցավ իր հաշիվները պարզել ծառաների հետ: Երկրորդը պարտապան ծառան է, ով շատ մեծ պարտք ուներ թագավորին. 10000 քանքար, մյուսը նրա ծառայակիցն է, որն արդեն իրեն էր պարտք՝ ընդամենը 100 դահեկան՝ 10000 քանքարի դիմաց չնչին մի գումար: Ծառայի պարտքի մեծության մասին կարելի է պատկերացում կազմել հենց առակի տեքստից. պարտքի դիմաց «նրա տերը հրամայեց վաճառել նրան, նրա կնոջն ու որդիներին եւ այն ամենը, ինչ նա ուներ, եւ պարտքը հատուցել» (Մատթ. ԺԸ 25): Այսպիսի դաժան պատիժ էր սպասվում պարտապան ծառային, եթե տերն աններող լիներ: Սակայն երբ ծառան ընկավ տիրոջ ոտքերը, աղաչեց, պաղատեց, որ տերը համբերող լինի՝ խոստանալով ժամանակի ընթացքում բոլոր պարտքերը վճարել, տերը ոչ միայն համբերեց, այլեւ արեց այն, ինչ ծառան չէր էլ կարող երազել. «գթալով արձակեց նրան եւ պարտքը նրան շնորհեց»: Ասել է թե՝ զիջեց, մոռացավ, նվիրեց՝ դրանով կործանումից ուղղակիորեն փրկելով ծառային եւ նրա ողջ ընտանիքը: Հասկանալի է, որ առակում թագավորը երկնավոր Հոր

խորհրդանիշն է. լսեց աղաչանքը եւ շնորհեց: Իսկ ի՞նչ արեց ծառան: «Իսկ ծառան դուրս ելնելով՝ գտավ իր ծառայակիցներից մեկին, որ իրեն հարյուր դահեկան էր պարտք: Եվ նրան բռնելով՝ խեղդում էր ու ասում. «Վճարի՛ր ինձ, ինչ որ պատրք ես» (Մատթ. ԺԸ 28), Ահա՛ թե ինչ... Թվում է, թե այն բանից հետո, ինչ կատարվեց իր հետ, նա այնքան պիտի ուրախանար, աշխարհով մեկ լիներ, այնքան բարի ու ներողմիտ պիտի դառնար, որ մնացած ողջ կյանքում միմիայն բարի ու առաքինի գործերով պսակեր իր անունը՝ դրանով իսկ փառավորելով Աստծուն, որ տերն այդպես ներողամիտ գտնվեց իր հանդեպ: Բայց արի ու տես, որ նույնիսկ լսել չուզեց իր ընկերոջ աղաչանքը, այլ «գնաց նրան բանտ նետել տվեց, մինչեւ որ պարտքը վճարեր» (Մատթ. ԺԸ 30): Եվ բնական է, որ տերը պիտի զայրանար ծառայի այդքան տմարդի վարմունքից ու հանդիմաներ. «Չա՛ր ծառա, քո ամբողջ պարտքը քեզ շնորհեցի նրա համար, որ աղաչեցիր ինձ, իսկ պետք չէ՞ր, որ դու էլ գթայիր քո ծառայակցին, ինչպես ես էլ քեզ գթացի» (Մատթ. ԺԸ 32-33): Բնական է, որ ներելով ծառայի անհաշիվ պարտքերը՝ տերը (Աստված) նույն ակնկալիքն ուներ ծառայից, որ գոնե այդ փոքրիկ պարտքը զիջեր: Ու քանի որ չարեց, ուրիշ բան չէր մնում տիրոջը, քան նրան հանձնել դահիճներին:

Ապա երեխային ուղղվում են հարցեր.

1. Ո՞րն է առակի հիմնական միտքն արտահայտող նախադասությունը.
2. Ինչպե՞ս ես մեկնաբանում այս առակը
3. Քո կարծիքով թագավորը վերջում արդա՞ր վճիռ կայացրեց:
4. Վերաշարադրիր առակի բովանդակությունը որպես դեպքերի ականատես:
5. Շարադրանքը ներկայացրու առաջին դեմքով:

Որոմը ցորենի նմանությամբ, սակայն վնասակար բույս է: Ցորենի ու որոմի արմատները, որոշ ժամանակ իրար հետ աճելով, միախառնվում են և եթե որևէ մեկը հասունացած ցորենի կողքին աճող որոմն արմատախիլ անի, կվնասի նաև ցորենը: Որոմների մասին Ավետարանական առակում Աստված թույլ է տալիս, որ դրանք միասին աճեն: Առակի հիմնական հարցը այսօր էլ հնչում է՝ ինչու՞ է Տերը երկրում հանդուրժում չարն ու վնասակարը:

Մեկ ուրիշ առակ էլ նրանց ասաց. «Երկնքի արքայութիւնը նմանուեց մի մարդու, որ իր արտի մէջ բարի սերմ սերմանեց: Եւ երբ մարդիկ քնի մէջ էին, նրա թշնամին եկաւ եւ ցանած ցորենի վրայ որոմ ցանեց ու գնաց: Եւ երբ ցորենը բուսաւ ու պտուղ տուեց, ապա երեւաց եւ այն որոմը: Տանտիրոջ ծառաները մօտեցան ու ասացին նրան. «Տէ՛ր, չէ՞ որ քո արտի մէջ դու բարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է այդ որոմը»: Եւ տէրն ասաց նրանց. «Թշնամի մարդ է արել այդ»: Ծառաները նրան ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք այն»: Եւ տէրը նրանց ասաց. «Ո՛չ, մի գուցէ որոմը քաղելիս, ցորենն էլ նրա հետ արմատախիլ անէք: Թողէ՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչեւ հունձը, եւ հնձի ժամանակ ես հնձողներին կ՚ասեմ՝ նախ այդ որոմը քաղեցէ՛ք եւ դրանից խուրձեր կապեցէ՛ք այրելու համար, իսկ ցորենը հաւաքեցէ՛ք իմ շտեմարանների մէջ»:

ՈՐՈՄՆԵՐԻ ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Այն ժամանակ Յիսուս արձակելով ժողովրդին՝ տուն եկաւ. աշակերտները մօտեցան նրան ու ասացին. «Մեկնի՛ր մեզ համար արտի որոմների առակը»: Նա պատասխանեց եւ ասաց. «Այն, որ սերմանում է բարի սերմը, մարդու Որդին է, իսկ արտը այս աշխարհն է. բարի սերմը նրանք են, որ արքայութեան որդիներն են, իսկ որոմը չարի որդիներն են եւ թշնամին, որ այն ցանեց, սատանան է. իսկ հունձը այս աշխարհի վախճանն է, եւ հնձողները հրեշտակներ են: Ինչպէս որոմը հաւաքւում է եւ կրակի մէջ այրւում, այնպէս կը լինի այս աշխարհի վախճանին: Մարդու Որդին կ՚ուղարկի իր հրեշտակներին, եւ նրանք կը հաւաքեն նրա արքայութիւնից բոլոր գայթակղութիւնները եւ նրանց, որոնք անօրինութիւն են գործում: Եւ կը գցեն նրանց բոցավառ հնոցի մէջ. այնտեղ կը լինի լաց եւ ատամների կրճտում: Այն ժամանակ արդարները երկնքի արքայութեան մէջ կը ծագեն ինչպէս արեգակը: Ով լսելու ականջ ունի, թող լսի»:

Գլուխ 3.
<<Մոլորյալ որդու վերադարձը>> առակի միջոցով սովորեցնել զղջում և ներողամտություն

Առակների մեջ թերևս իր հնչեղությամբ և գրականության ու արվեստի մեջ բազմաթիվ արտացոլումներով առանձնանում է մոլորյալ կամ անառակ որդու

մասին պատմող առակը: Նախ կանգ առնենք այս երկու բառերի վրա՝ մոլորյալ, անառակ: Աճառյանի բառարանը մոլորյալ բառը համարում է սերած մոլ բառից՝ << մի բանի համար սաստիկ մոլորվիլ, խենթանալ>>. որ ածանցով՝ մոլորված, թյուրված իմաստով: Իսկ առակ բառի մեկնությունը տվելե ենք աշխատության սկզբնամասում՝ ավելացնելով ան- նախածանցը:()

Առակը պատմում է մի մարդու մասին, որն ունի երկու որդի: Կրտսեր որդին առակի գլխավոր կերպարն է: Փարիսեցիներն ու դպիրները, ինչպես նաև մյուս ունկնդիրները կարող են դաս քաղել այն ամենից, ինչ առակում ասվում է կրտսեր որդու մասին: Սակայն ուսանելի է նաև այն, ինչ Հիսուսը պատմում է Հոր և ավագ որդու դրսևորած վերաբերմունքի մասին: Ուստի խորությամբ մտածիր այս երեք անձանց օրինակների շուրջ:

Հիսուսն ասում է. «Մի մարդ երկու որդի ուներ: Կրտսերն ասաց իր հորը. «Հա՛յր, տուր ինձ քո ունեցվածքից իմ հասանելիքը»: Եվ հայրն իր ունեցվածքը բաժանեց նրանց միջև» (Ղուկաս 15:11, 12): Փաստորեն, կրտսեր որդին իր ժառանգությունը պահանջում է հոր կենդանության ժամանակ, ոչ թե նրա մահից հետո: Նա իր հասանելիքը հիմա է ուզում, որպեսզի կարողանա անկախ լինել և անել այն, ինչ ցանկանում է: Իսկ ի՞նչ է նա ցանկանում անել:

Հիսուսը շարունակում է. «Ծատ օրեր չանցած՝ կրտսեր որդին ամեն ինչ հավաքեց ու ճանապարհ ընկավ մի հեռու երկիր և այնտեղ ցոփ ու շվայտ կյանք վարելով՝ վատնեց իր ունեցվածքը» (Ղուկաս 15:13): Փոխանակ մնալու տանը՝ այդ ապահով հանգրվանում, որտեղ իր սիրառատ հայրը հոգ է տանում իր մասին ու ապահովում ամեն անհրաժեշտ բանով, որդին գնում է ուրիշ երկիր: Այնտեղ նա վատնում է իր ողջ ժառանգությունը՝ ապրելով ցոփ ու շվայտ կյանքով և տրվելով անբարո հաճույքների: Սակայն որոշ ժամանակ հետո նա լուրջ դժվարություններ է ունենում:

Հիսուսը պատմում է. «Երբ նա ամեն բան սպառեց, այդ երկրում սաստիկ սով սկսվեց, և նա կարիքի մեջ հայտնվեց: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներից մեկի մոտ, որ նա վարձի իրեն: Նա էլ նրան ուղարկեց իր դաշտերը՝ խոզերին

արածեցնելու: Եվ նա փափագում էր իր քաղցը հագեցնել եղջերենու պատիճներով, որոնք խոզերն էին ուտում, և ոչ ոք նրան ոչինչ չէր տալիս» (Ղուկաս 15:14–16):

Կրտսեր որդին այժմ այնպիսի ծանր կացության մեջ է, որ ստիպված է աշխատել որպես խոզապահ, այնինչ Աստծու Օրենքի համաձայն՝ խոզերը անմաքուր կենդանիներ են համարվում: Նա երկար ժամանակ ուտելու բան չի ունեցել և այնքան քաղցած է, որ նույնիսկ ցանկանում է ուտել այն կերը, որ տալիս են խոզերին: Հայտնվելով այդպիսի թշվառ ու հուսահատ վիճակում՝ «նա խելքի է գալիս»: Այդ ժամանակ նա մտածում է. «Քանի՞ վարձկան մարդիկ ունի իմ հայրը, որ առատ հաց ունեն, մինչդեռ ես այստեղ սովից մեռնում եմ: Վեր կենամ, ճանապարհ ընկնեմ հորս մոտ ու ասեմ նրան. «Հա՛յր, ես մեղք եմ գործել երկնքի ու քո դեմ: Ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու: Ինձ քո վարձկաններից մեկի պես դարձրու»»: Ապա նա վեր է կենում ու գնում իր հոր մոտ (Ղուկաս 15:17–20):

Ինչպե՞ս կարձագանքի հայրը, երբ նրա որդին վերադառնա: Արդյո՞ք նա կզայրանա ու կհանդիմանի իր որդուն այն բանի համար, որ անխոհեմություն դրսևորելով՝ հեռացավ տնից: Արդյո՞ք անտարբեր ու սառը վերաբերմունք կդրսևորի նրա հանդեպ: Եթե դու լինեիր հոր փոխարեն, ինչպե՞ս կվարվեիր: Ի՞նչ կանեիր, եթե քո զավակը այդ կրտսեր որդու պես վարվեր:

Հիսուսը նկարագրում է, թե ինչ է զգում հայրը և ինչպես է վարվում. «Երբ [որդին] դեռ հեռու էր, նրա հայրը տեսավ նրան ու խղճահարվեց, ապա վազեց, նրա վզովն ընկավ ու համբուրեց» (Ղուկաս 15:20): Հայրը ջերմորեն ընդունում է իր որդուն, թեև գուցե լսել է, որ նա անառակ կյանք է վարել: Հրեա կրոնական առաջնորդները, ովքեր ասում են, թե ճանաչում են ու երկրպագում են Եհովային, այս հոր օրինակից կհասկանա՞ն արդյոք, որ մեր երկնային Հայրը սիրով ընդունում է զղջացող մեղավորներին: Կամ կհասկանա՞ն, որ Հիսուսը նույնպես այդպիսի ջերմ վերաբերմունք է դրսևորում մարդկանց հանդեպ:

Տեսնելով, թե որքան տխուր ու հուսահատ վիճակում է իր որդին՝ հայրը հասկանում է, որ նա խորապես զղջում է իր արածների համար: Ու քանի որ հայրը, նախաձեռնություն դրսևորելով, ջերմորեն դիմավորում է որդուն, վերջինիս համար ավելի հեշտ է լինում խոստովանել իր սխալները: Հիսուսը շարունակում է. «Որդին

ասաց. «Հա՛յր, ես մեղք եմ գործել երկնքի ու քո դեմ: Ես այլևս արժանի չեմ քո որդին կոչվելու»» (Ղուկաս 15: 21):

Հայրն ասում է իր ծառաներին. «Իսկույն բերեք ամենալավ պատմուճանը և հագցրեք նրան, ձեռքին մատանի դրեք և ոտքերին սանդալներ հագցրեք: Բերեք պարարտ ցուլը ու մորթեք, եկեք ուտենք և ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»: Հետո նրանք «սկսում են ուրախանալ» (Ղուկաս 15:22–24):

Այս ընթացքում ավագ որդին դաշտում է: Հիսուսը պատմում է, թե ինչ է լինում հետո. «Երբ նա եկավ ու մոտեցավ տանը, երաժշտության ու պարի ձայներ լսեց: Ծառաներից մեկին կանչեց ու հարցրեց, թե ինչ առիթով են ուրախանում: Նա էլ ասաց. «Քո եղբայրն է եկել, և հայրդ պարարտ ցուլը մորթեց, քանի որ նա ողջ-առողջ վերադարձել է»: Նա էլ զայրացավ ու չուզեց ներս մտնել: Բայց հայրը դուրս եկավ ու սկսեց խնդրել նրան: Նա էլ ասաց հորը. «Այսքան տարի է ծառայում եմ քեզ ու երբեք քո պատվիրանները չեմ ոտնահարել, բայց դու ինձ մի ուլ անգամ չտվեցիր, որ ընկերներիս հետ զվարճանամ: Սակայն հենց որ քո այս որդին եկավ, որ պոռնիկների հետ կերավ քո ունեցվածքը, նրա համար պարարտ ցուլը մորթեցիր»» (Ղուկաս 15:25–30):

Վարվելով այս ավագ որդու պես՝ դպիրներն ու փարիսեցիները քննադատում են Հիսուսին այն բանի համար, որ նա ողորմություն և հոգատարություն է դրսևորում հասարակ մարդկանց ու մեղավորների հանդեպ: Թերևս հենց դա է պատճառը, որ Հիսուսը պատմում է այս առակը: Անկասկած, ամեն ոք, ով քննադատաբար է վերաբերվում այն բանին, որ Աստված ողորմություն է դրսևորում ինչ-որ մեկի հանդեպ, պետք է դաս քաղի այս առակից:

Հիսուսը ավարտում է այս առակը՝ ասելով, թե ինչ հորդոր է տալիս հայրը իր ավագ որդուն. «Որդյա՛կ, դու միշտ ինձ հետ ես եղել, և իմ ողջ ունեցածը քոնն է, բայց մենք պետք է ուրախանանք ու ցնծանք, որովհետև քո այս եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց» (Ղուկաս 15:31, 32):

Հիսուսը չի նշում, թե ի վերջո ինչ է անում ավագ որդին: Սակայն Հիսուսի մահից ու հարությունից հետո «քահանաների մի մեծ բազմություն ընդունում է հավատը»

(Գործեր 6:7): Թերևս նրանց թվում են նաև այն կրոնական առաջնորդներից ոմանք, ովքեր լսում են Հիսուսի պատմած այս առակը: Այո՛, նույնիսկ նրանք են խելքի գալիս, զղջում ու վերականգնում իրենց փոխհարաբերություններն Աստծու հետ:

Հիսուսի աշակերտները պետք է իրենց սրտում պահեն այն կարևոր դասերը, որ Հիսուսը սովորեցրեց այս հիանալի առակի միջոցով: Առաջին դասն այն է, որ խելամիտ կվարվենք, եթե մնանք Աստծու ժողովրդի մեջ՝ մեր սիրառատ ու հոգատար Հոր թևերի տակ, ոչ թե հեռանանք այդ ապահով հանգրվանից ու «հեռու երկրում» ընկնենք հաճույքների հետևից:

Մյուս դասն այն է, որ եթե երբևէ շեղվենք Աստծուն հաճելի ճանապարհից, ապա պետք է խոնարհաբար վերադառնանք մեր երկնային Հոր մոտ, որպեսզի կրկին արժանանանք նրա հավանությանը:

Իսկ հասկանալու համար, թե որն է երրորդ դասը, կարող ենք հոր ջերմ, ներողամիտ վերաբերմունքը համեմատել ավագ որդու դառնասիրտ, անբարյացակամ վերաբերմունքի հետ: Անկասկած, Աստծու ծառաները ցանկանում են ներողամիտ լինել ու ջերմորեն ընդունել այն մարդուն, ով թեև շեղվել է ճշմարտության ճանապարհից, բայց անկեղծորեն զղջում է ու վերադառնում «Հոր մոտ»: Այո՛, այդ ժամանակ մենք պետք է ուրախանանք, որ մեր «եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:

Մի փոքր դիտարշավ անցկացնենք՝ ուսումնասիրելու առակի ներշնչանքը արվեստի և գրականության մեջ: Երեխաները դիտում են հետևյալ պաստառները, հանձնարվում որևէ մեկի վերաբերյալ հաղորդում պատրաստել:

Անառակ որդու վերադարձը, Ռեմբրանդի հայտնի ստեղծագործություն, հիմնված համանուն առակի վրա, ցուցադրված է Էրմիտաժում:

Անհայտ ֆրանսիացի նկարիչ, 17-րդ դար

Քարտագրում

Երեխաներին հանձնարարվում է լրացնել աղյուսակը.

Մարդը, որ ներել չէր ուզում առակը	Մոլորյալ որդու վերադարձը առակը
Կարևոր է՞ ներելը	Կարևո՞ր է զղջալը
Ինչպե՞ս ես վարվում, երբ ընկերդ սխալ է	Ինչպե՞ս ես վարվում, երբ սխալ ես գործում

Վերջերս քեզնից ներողություն խնդրել ե՞ն	Վերջերս ումի՞ց ես ներում խնդրել
Ներել ե՞ս ներողություն խնդրողին	Ներել է՞ քեզ
Մինչ այս առակի ընթերցումը՝ ես ...	Մինչ այս առակի ընթերցումը՝ ես...
Առակի ընթերցումից հետո՝ ես...	Առակի ընթերցումից հետո՝ ես...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով Աստվածաշնչյան՝ ի մասնավորի Հիսուսի առակները,հավատով ու կենսափորձով համոզված լինելով նրանց քրիստոնեավայել, մարդասիրության ճշգրիտ արժեքներ սերմանելու, երեխային՝ ապագա երիտասարդին ու քաղաքացուն, բազմաթիվ գայթակղություններից ու մոլորություններից հետ պահելու միակ ճշմարիտ ու անթերի լեզվով գրված առակները ունեն դաստիարակաչական նշանակություն և ավելի քան արդիական են: Այսպիսով,երեխաների քրիստոնեական դաստիարակության ,բարոյական

արժեհամակարգի ձևավորման մեջ աստվածաշնչյան առակներն ունեն անգնահատելի նշանակություն,հետևաբար առակների ուսումնասիրումը դպրոցում պետք է իրականացնել ժամանակակից մեթոդական տարբեր միջոցներով,որոնցից առավել նպատակահարմարներից է դերային (կերպարային) ներկայացման միջոցով,կրկնակի գրառումների մեթոդի միջոցով,երբ աշակերտը արտահայտում է սեփական վերաբերմունքը թեմայի այս կամ այն մտքի վերաբերյալ ,նաև T- աձև աղյուսակի միջոցով,երբ աշակերտը գրառում է երևույթի դրական և բացասական կողմերը՝ դրանով արտահայտելով իր վերաբերմունքը այս կամ այն արժեքի կամ հատկանիշի վերաբերյալ և այլ մեթոդներով և զարգացնելով սովորողի հետևյալ կարողունակությունները ունենում ենք ցանկալի 15 վերջնարդյունք՝լեզվական գրագիտություն և կարողունակություն,սովորել սովորելու կարողունակություն,ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,որն անձի դաստիարակության գործընթացում հանրակրթության հիմնական նպատակներից է:Իսկ այս ամենի ճիշտ վերլուծությունը և աշակերտների մեջ բարոյական ճիշտ և կայուն քրիստոնեական արժեհամակարգի ձևավորումը հայեցի դաստիարակության և ազգայինի պահպանման լավագույն օրինակը պետք է դառնա և դասավանդման մեջ ինչքան այս հիմքերն ամուր են դրված,այնքան առավել վստահ կլինենք,որ հայի գենն ու քրիստոնյային վայել ապրելակերպն ու պատվիրանների համակարգը կդառնա կենսակերպ այսօրվա և ապագա սերունդների համար՝առաջնահերթությունը տալով ազգայինին և քրիստոնեականին:Եվ նրանց հետևողը կքայլի անխոտոր ճանապարհով: Համադրելով երեխաների պատասխանները մինչ առակների ուսուցումը և դրանց ուսուցումից հետո, համոզվում ենք, որ Հիսուսի առակները հինգերորդ դասարանցուն սովորեցնում են

1. Ներողամտություն
2. Ողջախոհություն
3. Մարդասիրություն
4. Ձղջում

Գրականություն

1. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան,1926
2. Մայրենի 5 դասագիրք, Երևան, 2019
3. Հ. Գալստյան , ,,Առակներն ուսուցանում են,, ,Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,2014թ
4. Ավետարան ըստ Մարկոսի
5. Ավետարան ըստ Մատթեոսի
6. Ավետարան ըստ Ղուկասի
7. Պետրոս Սարգսի Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան , Երևան, 2011
8. Qahana.am կայք
9. Հայ եկեղեցու պատմություն -5, դասագիրք, Երևան, 2019